ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Պետական մարմնի անվանումը՝ «Հանրապետության նախագահի աշխատակազմ» ՊՄ

Ամփոփաթերթի կազմման ամսաթիվը՝ 10.04.2025թ.

#	Դիտողության/ առաջարկի բովանդակությունը	Առնչվող ոլորտը, ծրագիրը, միջոցառումը	Դիտողության/ առաջարկի հեղինակը	Դիտողության/ առաջարկի ներկայացման ամսաթիվը	Պետական մարմնի դիրքորոշումը/ արձագանքը դիտողության/ առաջարկի վերաբերյալ	Դիրքորոշման ներկայացման ամսաթիվը
1	2	3	4	5	6	7
1.	Հայտի ռազմավարական մասում **ամբողջովին չեն ներկայացված** Հանրապետության նախագահին և Նախագահի աշխատակազմին /այսուհետ ՆԱ/ վերաբերելի ռազմավարական ծրագրերից բխող նպատակների ու միջազգային փաստաթղթերով ստանձնած հանձնառությունների կատարմանն ուղղված նպատակները և պարտավորությունները:	1154-11001	«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ	10.04.2025	**Չի ընդունվել** Խնդիրը հստակ ձևա-կերպված չէ:	10.04.2025

2.	Առաջարկվում է ՆԱ բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքի նկարագրերը շտկել և բյուջետային ծրագրերի ոչ ֆինանսական ցուցանիշները լրամշակել:	1154-11001	«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ	10.04.2025	**Չի ընդունվել** Խնդրի ձևակերպումը հստակ չէ:	10.04.2025
3.	«Սոցիալական ծրագրեր» արդյունքային ցուցանիշը առաջարկվում է հայտում ներառել որպես նոր առանձին միջոցառում՝ վերանվանելով այն «Բարեգործական ծրագրերի իրականացում»՝ ձևակերպելով միջոցառման անվանումը, նկարագրությունը, արդյուքային չափորոշիչները և ցուցանիշները:	1154-11001	«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ	10.04.2025	**Չի ընդունվել** Առանձին միջոցառման առաջարկությունը նպատակահարմար չէ, քանի որ արդեն նախատեսվել է «Սոցիալական ծրագրեր» և «Նախագահական նախաձեռնություններ» արդյունքային ցուցանիշները միավորել և 11001 միջոցառման շրջանակներում ներկայացնել որպես մեկ ցուցանիշ	10.04.2025
4.	«Նախագահական նախաձեռնություններ» արդյունքային ցուցանիշը առաջարկվում է հայտում ներառել որպես նոր առանձին միջոցառում՝ ձևակերպելով միջոցառման անվանումը, նկարագրությունը, արդյուքային չափորոշիչները և ցուցանիշները:	1154-11001	«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ	10.04.2025		10.04.2025
5.	Հայտի 11001 միջոցառման մեջ ներկայացված քանակական ցուցանիշը ՀՀ ԱԺ կողմից ներկայացված օրենքների ստորագրման վերաբերյալ առաջարկվում է բաժանել հետևյալ մասերի.	1154-11001	«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ	10.04.2025	**Չի ընդունվել** Սահմանադրությամբ սահմանված լիազորության իրականացումը ինքնին ներառում է անհրաժեշտության դեպքում ՍԴ դիմելու ընթացակարգ:	10.04.2025

	➢ ՀՀ ԱԺ կողմից ներկայացված օրենքների կապակցությամբ ՀՀ ՍԴ դիմած օրենքների քանակը, ➢ ՍԴ կողմից հակասահմանադրական ճանաչված օրենքների թիվը, ➢ Վերոհիշյալ 2 ցուցանիշների տոկոսային հարաբերությունը ստորագրված օրենքների ընդհանուր թվի նկատմամբ, ➢ Ընդունված այն օրենքների քանակը, որոնք անցել են ազդեցության գնահատման փորձաքննություն, ➢ Ընդունված այն օրենքների քանակը, որոնք անցել են ԵՄ օրենսդրության մոտարկման փորձաքննություն, ➢ Վերոհիշյալ 2 ցուցանիշների տոկոսային հարաբերությունը ստորագրված օրենքների ընդհանուր թվի նկատմամբ:					
6.	Հայտում չեն նախատեսվել «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայով ՆԱ վերաբերելի դրույթների մասով քաղաքականության միջոցառումներ:	1154-11001	«Տնտեսական իրավունքների կենտրոն» ՀԿ	10.04.2025	**Չի ընդունվել** Ընդունելի չէ, քանի որ Կոնվենցիան շատ ընդարձակ հարցերի շրջանակ է ընդգրկում,	10.04.2025

					իսկ առաջարկությունը հստակ միջոցառման չի անդրադառնում:	
7.	Նախագահի աշխատակազմի ՄԺԾԾ 2026-2028թթ. հայտում ներկայացված միջնաժամկետ Նպատակ 2-ը հանդիսանում է «Նոր գաղափարներ գեներացնող և ռազմավարական ծրագրեր մշակող լոկոմոտիվի դերի ստանձնումը և այդ դերի ճանաչելիության ապահովումը հանրության կողմից», որի գործողություններից է «Հանդես գալ նախաձեռնություններով, հայեցակարգերով, զարգացման տեսլականներով տարբեր ոլորտների վերաբերյալ՝ առաջարկելով նորարար լուծումներ»: Կարևորելով այս նպատակի իրականացման անհրաժեշտությունը, առաջարկում ենք այն ևս ներկայացնել որպես նոր միջոցառում՝ ձևակերպելով միջոցառման անվանումը, նկարագրությունը, արդյունքային չափորոշիչները և ցուցանիշները:	1154-11001	«Տնտեսական իրավունքների կենտրոն» ՀԿ	10.04.2025	**Չի ընդունվել** Ընդունելի չէ, քանի որ Սահմանադրության 109-րդ հոդվածի համաձայն օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորները, Ազգային ժողովի խմբակցություններն ու Կառավարությունը: Ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք:	10.04.2025